

**«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/3

28 փետրվարի 2014 թ.

Քննարկվեց ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

**ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ նաև Ծառայություն) հաշվետվությունները (հոկտեմբեր ամսվա վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտը և եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկը) ՀՀ հարկային ծառայության էլեկտրոնային համակարգ են ներկայացվել դեռևս 2013 թ-ի նոյեմբերի 15-ին, սակայն դրանք չեն գրանցվել, որը պայմանավորված է «signature 1» ներկայացուցչի ստորագրության սխալով:

Խնդրի լուծման համար բազմիցս կապ է հաստատվել թե՛ զժի աշխատակիցների հետ և ծառայությանը պատասխանվել է, որ դա ընդհանուր բնույթի խնդիր է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվելու, իսկ կիրառվելու դեպքում անհրաժեշտ է դիմել գանգատարկման հանձնաժողով՝ կիրառված տուգանքը վերանայելու համար: Միաժամանակ սխալի մասին տեղեկացնող հաղորդագրություններով էջերը (Print Screen) ուղարկվել է «online-support@taxservice.am» էլեկտրոնային հասցեին:

ՀՀ Էրեբունու հարկային տեսչությունը ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նկատմամբ 2013 թ-ի հոկտեմբեր ամսվա վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտերի և եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվետվությունների ուշացման համար կիրառել է 1.475.533 դրամ տուգանք՝ համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի:

Ելնելով վերոգրյալից ծառայությունը խնդրում է վերացնել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նկատմամբ կիրառված տուգանքը՝ հիմք ընդունելով 2013 թ-ի հոկտեմբեր ամսվա գրանցման հայտի վերաբերյալ «Print screen»-ը և 2013 թ-ի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկի վերաբերյալ «Print screen»-ը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ծառայության և ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ ներկայացուցիչների ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ծառայության կողմից 25.12.2013 թ-ին էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ է ուղարկվել 2013 թ-ի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկը՝ գումարով 14.755330 դրամ, սակայն համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի, նշված հաշվարկի պետք է ներկայացվեր մինչև 20.11.2013 թ-ը: Արդյունքում, Էրեբունու ՀՏ կողմից կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքը՝ գումարով 1.475.533 դրամ:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրությամբ հաստատվեց այն փաստը, որ իրոք, հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկը Ծառայության կողմից ՀՀ հարկային ծառայության էլեկտրոնային համակարգ ներկայացվել է 2013 թ-ի նոյեմբերի 15-ին, սակայն համակարգի կողմից այն չի գրանցվել, որը պայմանավորված է եղել «signature 1» ներկայացուցչի ստորագրության սխալով, և Ծառայության կողմից ձեռնարկված բոլոր միջոցները, որոնք ուղղված են եղել հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկը սահմանված ժամկետում մուտքագրել ՀՀ հարկային ծառայության էլեկտրոնային համակարգ, եղել են ապարդյուն:

Հանձնաժողովի համոզմամբ իրավական պատասխանատվության հիմքում առանց բացառությամբ պետք է ընկած լինի մեղքը:

Քննարկվող դեպքում ևս «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված խախտման առկայության համար անհրաժեշտ է, որ խախտում կատարած անձը այն կատարած լինի մեղավորությամբ, այսինքն՝ անհրաժեշտ է պարզել Ծառայության կողմից թույլ տրված խախտման մեջ մեղքի առկայության փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ծառայության գործողություններում բացակայում է մեղքը, Հանձնաժողովը գտնում է, որ Ծառայության նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքը ենթակա չի եղել կիրառման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### **ո ր ո շ ու մ է՝**

1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության գանգատը բավարարել:

2. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության անձնական հաշվի քարտից նվազեցնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տուգանքը՝ գումարով 1.475.533 դրամ:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**